ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐՏԻ ՄԱՐԶԻ ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Պարույր Սևակ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Պարույր Սևակ, (093)888278, paruyrsevak.ararat@mta.gov.am

Որոշում թիվ 17-Ն
Պարույր Սևակ համայնքի ավագանու 25.12.2015թ.

ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 26կետով համայնքի ավագանին

որոշեց

հաստատել գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը 2016թ-ի համար հետևյալ տեսքով՝

1.աշխատակիցների թվաքանակը՝ 5

2.Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

N	Հաստիքի անվանումը	հաստիքային միավորը	պաշտոնային դրույքաչափը (ՀՀ դրամ)
1	համայնքի ղեկավար	1	182000
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ			
2	աշխ. քարտուղար(1.2-1)	1	149500
3	աշխ. գլխ.մասնագետ(2.3-1)	1	147500
4	աշխ. առաջ.մասնագետ(3.1-3)	1	78000
ՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ			
5	հավաքարար	1	73000

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ

N	Հաստիքի անվանումը	հաստիքային միավորը	պաշտոնային դրույքաչափը (ՀՀ դրամ)

1	ՀՈԱԿ-ի տնօրեն- դաստիարակ	1	80000
2	դաստիարակի օգնական	1	78000
3	գիշերային պահակ	1	73000

Կողմ 5 դեմ 0 ձեռնպահ 0

Վ. Բաղդասարյան _____

Ա. Գևորգյան _____

Զ. Մարտիրոսյան _____

Ա. Նիկողոսյան _____

Ռ. Թորոսյան _____

Համայնքի ղեկավար՝ Է. Ստեփանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐՏԻ ՄԱՐԶԻ ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Պարույր Սևակ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Պարույր Սևակ, (093)888278, paruyrsevak.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 25 » դեկտեմբերի 2015 թվականի N 15

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 25.12.2015 ԹՎԱԿԱՆԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14 հոդվածով Պարույր Սևակ համայնքի ավագանին որոշեց.
Հաստատել 25.12.2015 թվականի նիստի օրակարգը՝

1. 2016թ-ի համար տեղական տուրքերի և վճարների հաստատում.
2.2016թ-ի համար համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի հաստատման մասին.

Կողմ 5 դեմ 0 ձեռնպահ 0

Վ. Բաղդասարյան
Ա. Գևորգյան
Զ. Մարտիրոսյան
Ա. Նիկողոսյան
Ռ.Թորոսյան

Համայնքի ղեկավար՝ Է. Ստեփանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐՏԻ ՄԱՐԶԻ ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Պարույր Սևակ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Պարույր Սևակ, (093)888278, paruyrsevak.ararat@mta.gov.am

Որոշում թիվ 16-Ն
Պարույր Սևակ համայնքի ավագանու 25.12.2015թ.

2016Թ.-Ի ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ՈՒ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական տեղական տուրքերի ու վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ և 11-րդ հոդվածների համայնքի ավագանին

որոշեց

հաստատել համայնքի տարածքում 2016թ-ի համար տեղական տուրքերի ու վճարների հետևյալ դրույքաչափերը:

ա) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների, (այդ թվում՝ ոչ հիմնական) շինարարության, վերակառուցման, ուժեղացման, վերականգման, արդիականացման, բարեկարգման աշխատանքներ (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանած՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) իրականացնելու նպատակով շինարարության թույլտվության համար տեղական տուրքերը սահմանվում են.

1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ՃՇ նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝ հիմնական օբյեկտների համար՝

ա) մինչև 300ք.մ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200ք.մ ընդհանուր մակերես ունեցող արտադրական և հասարակական նշանակության օբյեկտների համար՝ 3000 դրամ:

բ) նախորդ կետով չնախատեսված օբյեկտների համար՝

--201-500ք.մ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 6000 դրամ.

--501-1000ք.մ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 9000 դրամ.

--1001 և ավելի ք.մ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000 դրամ:

Ոչ հիմնական շինությունների տեղադրման թույլտվության համար

--մինչև 20ք.մ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1000 դրամ.

--20ք.մ և ավելի ք.մ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների, վերակառուցման, ուժեղացման, վերականգման արդիականացման, բարեկարգման աշխատանքներ (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանած՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար իրականացնելու նպատակով շինարարության թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ՃՇ նախագծով՝

--չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսով ավելացում կամ շենքի գործառնական նշանակության փոփոխություն՝ 1000 դրամ:

--բացի օբյեկտի վերակառուցման, վերականգման, ուժեղացման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային

չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսով ավելացում կամ շենքի գործառնական նշանակության փոփոխություն, ապա բացի սույն կետի առաջին ենթակետի դրույթաչափերի կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի առաջին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.

--նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) շինարարության կամ շենքի գործառնական նշանակության փոփոխություն ապա այն համարվում է նոր շինարարություն, որի համար կիրառվում է սույն հոդվածի առաջին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների, քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 1000 դրամ:

4. . Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

ա)ոգելից խմիչքների վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար 2000 դրամ.

բ)ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար 2000 դրամ.

5.Համայնքի տարածքում

ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար՝ տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 10 դրամ.

բ) հեղուկի վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկի վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար՝ տեղական տուրքը սահմանվում է 150000 դրամ.

6. Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի, և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24-00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա) առևտրի օբյեկտների համար՝ 25000դրամ.

բ) հանրային սննդի և զվարճալիքների օբյեկտների համար՝ 50000դրամ.

գ) բաղնիքները (սաունաները) համար՝ 200000դրամ.

դ) խաղատների կազմակերպման համար՝ 500000 դրամ

ե) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250000 դրամ

զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100000 դրամ

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանքի գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 դրամ.

բ) թունդ ալկոհոլային արտադրանքի գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 դրամ.

գ) այլ արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ.

9. Սույն որոշման 1-ին, 2-րդ, 3-րդ կետերով սահմանված դրույքաչափերը հաշվարկված են 0.3 գործակցի կիրառմամբ:

Տեղական վճարների համար սահմանել հետևյալ դրույքաչափերը՝

ա)համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկա-տնտեսական պայմաններ հաստատելու շինարարության ավարտը փաստագրելու, շինարարության ավարտական ակտի ձևակերպման համար, ինչպես նաև շահագործման թույլտվություն տրամադրելու համար՝ գյուղապետարանի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարները սահմանել 5000 դրամ:

բ) գյուղապետարանի տնօրինման և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման

աշխատանքների համար գյուղապետարանի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 1000 դրամ.

գ) գյուղապետարանի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման վճար սահմանել 1000 դրամ:

դ)աղբահանության վճար սահմանել յուրաքանչյուր տնտեսությունից 0 դրամ:

Կողմ 5 դեմ 0 ձեռնպահ 0

Վ. Բաղդասարյան _____

Ա. Գևորգյան _____

Զ. Մարտիրոսյան _____

Ա. Նիկողոսյան _____

Ռ. Թորոսյան _____

Համայնքի ղեկավար՝ Է. Ստեփանյան